ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 55

«09» 07 2021 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 70 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի գործառույթները հստակեցնելու, ինչպես նաև դրանց արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության «Զորահավաքային մարմինների օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի N 591 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1880-Լ որոշումը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ու 7-րդ կետերով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 29-ի N 92 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 70 հրամանի 10-րդ հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 11-րդ կետում լրացնել նոր՝ 6-րդ ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝

«6) դատախազության գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմանն օժանդակումը»:

2) 17-րդ կետում լրացնել նոր՝ 19-22-րդ ենթակետեր հետևյալ բովանդակությամբ՝

«19) դատախազության գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը,

20) զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին մասնակցության նախապատրաստության ապահովումը,

21) դատախազությունում աշխատող պահեստազորայինների ամրագրման աշխատանքների ապահովումը, նրանց զինվորական հաշվառման, պահեստազորային պատրաստության միջոցառումներին և զորահավաքային զորակոչին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքները զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,

22) «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով դատախազության համար սահմանված այլ միջոցառումների իրականացման ապահովումը:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Հ.ԱՍԼԱՆՅԱՆ**